ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

09.04.2013թ.
200-ի 4

Էրեբունի վարչական շրջանի ղեկավար
պարոն Արմեն Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Զարուհի Եղիազարյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: Նա բնակվում է ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տանը, որը Էրեբունու շրջգործկոմի՝ 31.08.1995թ.-ի թիվ 33/150 որոշմամբ որպես սեփականություն հանձնվել է նրան եւ նրա ընտանիքին: Այժմ իրեն հատկացված տունը որպես սեփականություն գրանցելու համար Երեւանի քաղաքապետարան եւ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ ներկայացնելու համար նրան անհրաժեշտ են որոշ փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Տեղեկանք ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 հասցեում գտնվող շինության կառուցման տարեթվի վերաբերյալ,
2. Տեղեկանք համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պարտավորությունների վերաբերյալ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան